



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 25_L

22 ապրիլի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ՇԱՐՔ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ԵՎ ՄԻԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18)-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18)-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի երկրաֆիզիկայի ու ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբանության ամբիոնի:

2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աստվածաբանության ու հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը աստվածաբանության ու հայ եկեղեցու պատմության ամբիոնի:

3. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռուսաց լեզվի (բնագիտական ֆակուլտետների համար) ու ռուսաց լեզվի (հումանիտար ֆակուլտետների համար) ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը ռուսաց լեզվի ամբիոնի:

4. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ակտուարական մաթեմատիկայի և ռիսկերի կառավարման ու ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնների միաձուլման եղանակով վերակազմակերպումը ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի:

5. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոնների միաձուլման եղանակով

վերակազմակերպումը հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի:

6. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սիյուռքագիտության ամբիոնի վերակազմակերպումը հայոց պատմության ամբիոնին միացման եղանակով:

7. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին կառուցվածքային ստորաբաժանումների միաձուլման և միացման վերաբերյալ աշխատակիցներին ծանուցել՝ ՀՀ օրենսդրության և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտի հաջորդ օրվանից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. ապրիլ «22»

Երևան